պատմէ Թաթարաց Զարմա - զանի Անեցւոց տուած կոտորածը, և նոցա փախուստը յԱխսարայ, որ էր 'ի մէջ Սժտերխանի և Ղազանի. և անտի՝ յԱխսարայէ 'ի Թէոդոսիա չուելը Անեցւոց 1330 ին։ Սակայն օտարաց՝ նոյն իսկ և ազգիս յիշատակք՝ այդ աշխարհաց մէջ ցիր և ցան, յայտնի կը ցուցընեն՝ որ քան զայդ թուականը շատ առաջ եղած են գաղթականութիւնք 'ի Հայաստանէ 'ի Ռուսաստան 'ի Լեհս և 'ի Ղրիմ։

Քարամզին[1] Ռուսաց պատմահայրը կը գրէ՝ որ Ղազան քաղաքէն 90 վերստ հեռուն, երբեմն Բուլղար կոչուած քաղաքին մէջ՝ գտնուած են հայ արձանագրութիւնք. այժմ այն քաղաքին տեղ կայ Սիլիթրեանները անունով քաղաքը։ Օտեսսայի Հնագիտական Յիշատակարանաց Ե հատորին մէջ, 'ի Ժ դարու կ'ըսուի Հայոց գաղթականութիւնը Սև ծովուն և Վոլգա և Տնեբեր գետոց եզերաց վրայ։ Հին և թերակատար յունարէն գրուած Յայսմաւուր մի կը գրէ որ 1292 ին 'ի Սուտաղ Տաւրիոյ բնակող Հայք՝ համարէն քրիստոնէից հետ 'ի միասին տօնած չեն Զատիկը, այլ մոլորած են (Գռազատիկ)։

Հնագէտն Ալտոնի, ինչպէս յիշեցինք քիչ առաջ կը գրէ՝ որ Հայոց առաջին գաղթականութիւնը 'ի Հայաստանէ դէպ 'ի Ռուսաստան պատահած է 1009 ին, հրաւիրեալ 'ի Նախարարաց Քիեւի յաջակցութիւն ընդդէմ պատերազմաց Խրոխտն Բոլեսլաւի՝ որ յարձակմամբ ոտնակոխ կ'առնէր նոցա երկիրը։ Ի 1062 դարձեալ Քիեւի Նախարարն Թէոդորոս Դէմետրեան (Տիմթրիեւիչ) յոգ-

1. Ե հատոր Օտեսսայի Հնագիտական Յիշատակարանաց։